

ները լուծվարի 20-ին մի ներկայացուցիչն են տուել: Հոգևոր ուսումնարանի հոգաբարձուներին մէկը ընդգծեմ է եղել այն մտքին, որ ներկայացուցիչ մասնաւոր մարդու գահի մէջ լինի, մինչդեռ Հին-Նախնականում ոչ առանձին թատրոնական գահից կայ և ոչ ուսումնարանը յարմար տեղ ունի:

Մեզ գրում են ԵՐԵՎԱՆԻՑ. «Յունվարի 7-ին հայ թատրոնաւորներին խումբը թատրոնական գահից ներկայացրեց տաղանդաւոր պ. Գ. Սաւոյեանի նկարագրած «Գանգաթ» Օլախային սան: Աւելորդ եմ համարում այդ գեղեցիկ պիես-տայի մասին խօսել, քանի որ նա ամենքին յայտնի է: Խաղը շատ լաւ էր, բոլոր խաղացողները հիւանդի կատարեցին իրանց դերերը: Հաւանական թիւնը ոգևորված էր թէ պիեսայի բովանդակութիւնը և թէ գեղեցիկ խաղը: Պէտք է չորս-հաւանական յայտնել Գանգաթի օրինակներին և տ. Ե. Մարգարիտիան և Սարգսեանին: Թատրոնաւորները մէջ կան այնպիսի անձինք, որոնք հասարակ աշխատողներ են և իրանց մասնաւոր պարագամուտքից շատ քիչ վարձատրված: Վատ էլ էր լինի եթէ դրանցից խորքանշխարհ օգտին մի մի ներկայացում տրվէր: Այդ պարոնները շատ են աշխատում թատրոնական գործի համար և գուցէ իրանց զոհում են մի ուրիշ եկամուտից, որ կարող էին ունենալ. եթէ իրանց ժամանակը ուրիշ գործով զբաղեցնէին:

ԲԱՅԱՆԻՑ Մարգարիտիան ընկերութեան վարչութեան խորհուրդը խնդրում է մեզ յայտնել, որ յունվարի 27-ին ընկերութեան կանոնադրութեան 26-րդ յօդուածի համաձայն լինու է անդամների ընդհանուր ժողով ընկերութեան տան գահից: Ժողովի նպատակն է քննել ընկերութեան վարչութեան անցեալ տարվայ գործունէութիւնը և ներկայ տարվայ համար նոր կարգադրութիւններ անել:

Մեզ հաղորդում են ԵՐԵՎԱՆԻՑ. որ յունվարի 7-ին «Գանգաթ» Օլախայի ներկայացման ժամանակ առաջին անգամ անտրականերում տեղական երաժշտութիւն էր անում, զինուորական երաժշտութեան տեղ: Հասարակութիւնը այդ նորութեանց շատ գոհ մնաց:

Ուրախ, յունվարի 18-ին ԹԻՖԼԻՍԻՍԻՄ մեծ քանակութեամբ ձիւն եկաւ: Քաղաքի շրջակայ գաւառերի վրա մի արշին բարձրութեամբ ձիւն է դրված:

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ հաղորդում են, որ Ե. Դադարյանով մի աստիճանաւորից 150 բուրլու պահանջ ունէր: Պարոնը կարգադրել է, որ այդ փողերը յանձնվեն Ալեքսանդրապոլի Սահակ-Նուչեան ձրիավորած ուսումնարանին:

Մեզ գրում են ԵՐԵՎԱՆԻՑ. որ դեկտեմբեր ամսի վերջին շարժված ընթացքում այնտեղ երկու հրէշաւոր սպանութիւններ են պատահել: Մի երկուստարդ հայ որմնագիր Ալեքսան անունով սպանել է իր այրի խորթ-մորը, խանալը նրա փորը կոխելով: Մի թուրք էլ սպանել է իր կնոջը: Սպանութեան պատճառները դեռ յայտնի չեն: Երկուստարդ հային բանտարկել են և քննութիւնը սկսված է:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ չքաւորների համար տեղական հարուստները հաւաքեցին 300 բուրլ: Այդ փողերը դաւաճապետը բաժանեց աշխատողներին, իւրաքանչիւրին 2, 3, 4 բուրլ տալով:

Մեզ գրում են ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՑ. «Զեյր լրագրի անցեալ 1879 թ. դեկտեմբերի 19-ի № 221 համարում կարդացել, թէ իւր խախալ և Զահուկ գիւղերում մի այրի կին չը կարողանալով հիւանդ իւր երեխաներին, նրանցը ծախել է: Այդ լուրը սարսափ դրեց և հէնց այդ պատճառաւ պ. Նոստրիուս Միքայէլ Մեկրեանցը դնաց խախալ և Զահուկ որ իննսայ թէ ոչ է արել այդ բանը: Գործից երեքսու, որ այդպիսի բան ոչ մի ժամանակ չէ պատահել, զարմանում եմ այդ թուրթակի վրա, որ այնպիսի ստուգութիւններ է հաղորդում, բայց ինչ կը վերաբերի թանգութեանը, զում, բայց ինչ կը վերաբերի թանգութեանը, այս մտքի օրինակ եկել էին մօտակայ տեղերից

մարդիկ և քանդավորում են որ հաց չէ ծաղկում: Մանաւանդ որ թէ գիւղերի և թէ իսկ Նախիջևանի ցածր դաւը այս բուսելու էլ նեղութիւն է կրում թանգութեան պատճառով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻԼԵՍՈՒՖ

Երազիրները հաղորդում են, որ այս օրերս վախճանվեցաւ հռչակաւոր Ժիւլ-Ֆալթը, որ նշանաւոր դեր է խաղացել Ֆրանսիայի վերջին տարվայ քաղաքական տապալկի մէջ:

Վերջ-Վարդի-Ժիւլ-Ֆալթը վաճառական ծընողների զաւակ էր. նա ծնվել էր Լիօնում 1809-ի մարտի 21-ին: Նա դեռ նոր էր վերջացել իր ուսումը Փարիզի իրաւաբանական համալսարանում, երբ ծաղկեաւ 1830-ի յեղափոխութիւնը: Նա մասնակից եղաւ այդ յեղափոխութեանը, և յուլիսի 29-ից սկսած նա մի նամակ հրատարակեց «National» լրագրում, որի մէջ նա պահանջում էր թագաւորութեան կործանումը և մի սահմանադրական իշխանութեան հաստատութիւնը:

Մի քանի ժամանակից յետոյ նա Լիօնի դատաստանական վարչութեան մէջ մի նշանաւոր պաշտոն ստացաւ և այնուհետեւ սկսեց արձակ համարձակ հանրապետական մտքեր տարածել: 1831-ի նոյեմբերին նա մասնակից էր պահանջներին և գործաւորների մէջ պատահած արհեստակցի կուլին: 1834-ին նա պաշտպանում էր այն գործաւորներին, որոնք մեղադրվում էին, որ առանց թողութեան ժողովը են կազմել: Վատարանից դուրս գալու միջոցին, նա քիչ էր մնում, որ զոհ էր գրւում մի հրացանաձգութեան, որը սխալմամբ ուղղված էր դէպի անպաշտպան քաղաքացիները: 1835-ին նա Փարիզում պաշտպանեց ապրիլի մեղադրվածներին, և նա իր պաշտպանական ծառն սկսեց. «Նա հանրապետական եմ» խօսքերով չը նայելով իր հիւանդ դրութեանը, նա այդ գործը պաշտպանում էր չորս ժամ շարունակ, և այդ պատճառով քիչ էր մնում, որ նրա զեանքը նորից վտանգի էր ենթարկվում:

Փետրվարի յեղափոխութեան ժամանակ Ժիւլ-Ֆալթը նշանակվեցաւ ներքին գործերի մինիստրութեան գլխաւոր քարտուղար: Նորոճում են, որ նա է, Ալգրիւ-Վոլլէին յեղափոխական դարձրել: Նոյնպէս նրան են վերաբերում այն հռչակաւոր շրջաբերականը, որը պէտք է առաջնորդէր արտակարգ գործակաւորներին նրանց անսահման իշխանութեան գործադրութեան մէջ: Երբ նա 34,260 ձայների բազմութեամբ Լուարի ներկայացուցիչ ընտրվեցաւ, այն ժամանակ, նա հրաժարվեց ներքին գործերի մինիստրութեան մէջ ունեցած պաշտօնից: Արտաքին գործերի վերաբերութեամբ կազմված մասնաժողովի անդամութեան և պետական քարտուղարի օգնական եղած ժամանակ, նա մեծ եռանդով մասնակցեց ազգային ժողովի աշխատութիւններին: Մայիսի 15-ին պատահած եղեռնագործութեան առիթով կողմնակից յանձնաժողովի քաղաքագործը նշանակվեցաւ Ժիւլ-Ֆալթը, և Լուի-Քլանի գործը մեծ աշխոյժով պաշտպանեց:

Սահմանադրական ժողովի անդամ ընտրվելու ժամանակ, նրան ամենաշատ քուէներ տուին աջակողմեան և ձախակողմեան կուսակցութիւնները, բայց չը նայելով աջակողմեաններին համակրութեանը, նա սկսեց պաշտպանել ձախակողմեանների սկզբունքները, և այնուհետեւ գրեթէ բոլոր հարցերի մէջ բուլտարիում էր ձախակողմեանների հետ: Օրինակ նա ձախակողմեանների հետ քուէարկեց յո-

գուտ լրագրիներին երաշխաւորութեան, մահահաւան պատժի ոչնչացնելուն և հետզհետեւ ամուլ հարկերի թիւեացնելուն: Մի քանի հարցերում նա մինչև անգամ չէր դիմադրում իսկ մի քանի նշանաւոր հարցերում էլ նրա հրաժարականը արգելք եղաւ մասնակցելու:

Դեկտեմբերի 10-ի ընտրութիւնից յետոյ, Ժիւլ-Ֆալթը սկսեց հետզհետեւ աւելի ու աւելի զգալի կերպով ընդդիմադրութիւն գործել նախագահին և նրա ուժին աւելացնելու ու իտալական արշաւանքին յետադարձ 12,000,000 ֆրանկի հարցը քուէարկելուց յետոյ, նա դատարանի առաջ ամենամեծ եռանդով պախալակեց այդ արշաւանքին տուած ուղղութիւնը, և պահանջեց, որ նախագահը ու իր մինիստրները պատասխանատու լինեն իրանց բռնած ընթացքին: Մի անգամ ընտրութեանց յետոյ, նա առավարկեց տաւաշնորդների թիւն անցաւ. իսկ Ալգրիւ-Վոլլէին փախուստից յետոյ նա իր վրա ընդունեց Մենտայի հսկողութեան պաշտօնը: Նրա խօսած ծառերի մէջ ամենանշանաւորներն են, նրանք, որոնք մէջ նա պահանջում էր լրագրութեան երաշխաւորութեան վերահաստատութիւնը, հիշում էր Պուլզոնի առաջարկութիւնը, և մերկայում էր հռչակեցին:

Դեկտեմբերի 2-ի պետական հարուածը վեց տարով հեռացրեց Ժիւլ-Ֆալթին քաղաքական ապարէզից: Երբ նրան Լուարի և Բոնի գլխաւոր խորհրդարանի անդամ ընտրեցին, նա հրաժարվեց նոր սահմանադրութեան պահանջած երգումից, և այդ պատճառով նա սահմանափակեց իր գործունէութեան ապարէզը իր փաստարանութեան պաշտօնով: Նա ձայներն ահագին առաւելութեամբ Փարիզի կարգապահական խորհրդարանի անդամ ընտրվեցաւ: 1857-ին ընդդիմադրական կուսակցութիւնը զուր աշխատեց պաշտպանել Լիօնում նրա կանկալատութիւնը օրէնսդրական ժողովի մէջ. ձայների ահագին առաւելութեամբ քուէարկեց նրա հակառակ, բայց հետեւաւ տարին Փարիզի մասնաւոր ընտրութիւններից մէկում նրան այնու ամենայնու անգամ ընտրեցին մի և նոյն օրէնսդրական ժողովի մէջ. պէտք է մոռանալ, որ այդ միջոցները նրա անունը ստատիկ հռչակվել էր Օրսինի գործի վերաբերութեամբ, որտեղ նա պաշտպանում էր զիւստոր մեղադրվածի գործը:

Օրէնսդրական ժողովի նիստում Ժիւլ-Ֆալթը մի քանի անգամ առեւտաւորութիւններ առաւ, և իր ծառերի մէջ նա խօսեց զիւստորադրական ներքին և արտաքին քաղաքականութեան մասին, մասնաւոր 1859-ին նա ստատիկ յարձակվեցաւ իտալական արշաւանքի պատճառ եղողների վրա:

Նա հինգ և քանիստ անգամ փախքի ընդդիմադրական կուսակցութեան ամենաշատ նաւոր առաջնորդներից մէկն էր. այդ փախքի կուսակցութիւնը մեծ եռանդով պաշտպանում էր բոլոր այն հարցերը, որոնց կառավարութիւնն ու ժողովի ահագին մեծամտեմբութիւնն անդադար ծնում-կործանում էին: Երբ հռչակում նա ստիպվեցաւ դէմ դնել ահագին փոփոխութիւն: 1863-ին Ժիւլ-Ֆալթը նորից ընտրվեցաւ Փարիզի ընդդիմադրական կուսակցութեան պատգամաւոր: 27,798 քուէարկողներից նա 18,744 ձայն տացաւ: Այդ մի և նոյն ժամանակ նրան ընտրեցին նոյնպէս և Լիօնում: Այնի կուսակցութեան մէջ նրա հակառակորդն էր Ալգրիւ-Վոլլէին, իսկ Բոնի կուսակցութեան մէջ նրան մրցողն էր Լա-Ֆորէստ: Նա ընդունեց Բոնի պատգամաւորութիւնը:

Ժիւլ-Ֆալթը մնաց նոր ժողովում իբրեւ առավարկեցական կուսակցութեան առաջնորդ, մի և նոյն ժամանակ նա Թիէրի հետ ընդդիմադրական կուսակցութեան ամենաարտաքին լի հակառակորդից մէկն էր համարվում: Պէտք է խոստովանած, որ դրանք միակ հռչակողներն

էին, որոնց ամենքից շատ էին լուծւ: Նրա ծառերից շատերը, բայց այն, որ ահագին աղմուկ ու փոփոխութիւն էին բարձրացնում պարլամենտական շրջաններում, նրանք կարգապահ էին նոյնպէս և երբի մէջ ամենամեծ հետաքրքրութեամբ, և ամենամեծ ուշադրութեամբ:

(Կը շարունակվի)

«ՄԵԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յունվարի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ 17-ին դիշերը Սապեօրի փողոցում № 10 տան № 9 սենեակներում գտնված է գաղտնի տպարան: Նրա մէջ գտնվող հինգ անձինքը, որոնցից և բերը տղամարդիկ, իսկ երկուքը կանայք էին, գէնքով ընդդիմադրութիւն գործեցին, ժանդարմների և պոլիցիականների վրա առաջնակներ արձակեցին, և վերադարձին պրիստավի օգնականի ձեռքը չորսին կայանաւորեցին, իսկ հինգերորդը ընկալվեց արձակից իր քուէքին և սպանեց իրան. գտնված են սպարանական գործիքներ, «Народная Воля» լրագրի ահագին քանակութիւն, կեղծ կնիքների տուփեր, պատրաստված կեղծ վարկաթիւք, թղթեր, ձայնի նիւթեր և դրան վերաբերալ գանազան գործիքներ:

ԿԱՆԵՆ, 1931 յունվարի: Այսօր Կայսրութեան ուղեւորվում է Ռուսաստան:

ԲԵՐԼԻՆ, 18/30 յունվարի: Նրէկ գերմանական թագաւորանոց իշխանը ուղեւորվեց Լուտիա: Ըննապարհ ընկնելուց առաջ ծրագրված զինուորագրութեան վերաբերութեամբ իշխանը երկար խօսակցութիւն ունեցաւ Բիսմարկի հետ: Ասում են, որ իշխանը համակրում է Բիսմարկի և Մոլտկէի ծրագրիներին, և համաձայն է հօրը համաձայնել նրանց իրազորվելուն:

ԿԱՆԵՆ, 17/29 յունվարի: Կայսրութեան օրը բաւականացուցիչ կերպով անցկացրեց. դիշերը լաւ քնեց, դրթէ չը հագաց. քրտիքը սաւաւ էր. վատ չը ծաշեց, միայն նեղանում էր արտի բարակումից. ջերմութեան աստիճանը երեկոյեան 38 էր, իսկ երակի զարկը 110. առաւօտը ջերմութեան աստիճանը 37,6 էր, իսկ երակի զարկը 116:

Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվարի: Կովկասեան փոստային շրջանի մի քանի հիմնարկութիւնների շտապների կարգադրութեան համար Բարձրագոյն հրաման կայացաւ:

ՊԵՐՄԻՆԻՆ, 17/29 յունվարի: Մուխոմար փաշայի և ալբանական դաշնակցութեան ներկայացուցիչների մէջ մի խոսքութիւն ծագեց, այն պատճառով, որ Մուխոմարը թող չը տուեց ալբանական պատգամաւորութեանը Կ. Պոլիս գնալու:

Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունվարի: «Правит. Вѣстн.» լրագիրը յունվարի 20-ին հաղորդում է հետեւեալը. Ըննապարհադրութեան ժամանակ Կայսրութեան ինքնադատութիւնը լուացել է չնչաւութիւնն աւելի ազատ է, քունն աւելի հսկողաւ. հազը սակաւացել է, քրտիքը շատ չափաւոր է. անորժակը միջակ է, արտի բարակումը քիչ է նեղացում. ջերմութեան աստիճանը երեկոյեան 37,9 էր, իսկ երակի զարկը 116. առաւօտեան ջերմութեան աստիճանը 37,4 էր, իսկ երակի զարկը 108: Մինիստր Մակով որոշեց, որ «Голосъ» լրագրում մի անգամ արգելվի մահահաւան պատժի ոչնչացնելու հարցը:

Կ. ՊՈԼԻՍ, 19/31 յունվարի: «Голосъ» լրագրին հեռագրում են, որ սոյն այնտեղ սարսափելի դրութեան է հասել. ստամբոլցիները որում են Բայնազէտի մէջտի սրբազան աղաները:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐԻՆԻ